

ԱՐՏԱՇԵՍ Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ
artashes.shahnazaryan1950@gmail.com

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀՐԱԶ ԲԱՐԹԻԿՅԱՆԻ
ՇԻՐԱԿԱՑԻԱԳԻՏԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐԸ*
(ԾՆՆԴՅԱՆ 95-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Բանալի բառեր՝ Անանիա Շիրակացի, Հ. Բարթիկյան, Արատոս Սոլացի, Եվդոքսոս Կնիդացի, Մեսրոպ Մաշտոց, Մատենադարան, Փիլոն Տիրակացի, Սոկրատ, Գ. Աբգարյան:

Ներածություն

Հայ միջնադարյան բնագիտական մտքի խոշորագույն ներկայացուցիչ՝ մաթեմատիկոս, աշխարհագետ ու փիլիսոփա Անանիա Շիրակացու դժվար գերազնահատելի մատենագրական ժառանգությունը հասկանալի պատճառներով եղել ու մնում է հայ և օտար հայագետների տեսադաշտում՝ հանդիսանալով քննության առարկա: Այն արժանացել է նաև անվանի հայագետ-բյուզանդագետ Հ. Բարթիկյանի ուշադրությանը: Անանիա Շիրակացուն համարելով հայկական միջնադարի ամենալուսավոր դեմքերից մեկը՝ Հ. Բարթիկյանը դրել է նրա, իբրև մտածողի, մասին լիարժեք ու ճիշտ պատկերացում կազմելու անհրաժեշտությունը: Նա կարծել է, որ դրան հասնելու համար հարկ է կատարված աշխատանքը բավարար չհամարելով անել հետևյալը. ա) Անանիա Շիրակացու հեղինակած երկերը զատել սխալմամբ նրան վերագր-

* Ներկայացվել է 15.IV. 2022թ., գրախոսվել է 13.V. 2022թ., ընդունվել է տպագրության 22.VI. 2022 թ.:

վածներից, բ) ճշտել, թե նա իսկապես ի՞նչ աղբյուրներից է օգտվել, գ) պարզել, թե նա հին աշխարհի ո՞ր գիտնականների նվաճումներին է արձագանքել, դ) ի՞նչ է ավելացրել մինչ իրեն եղած ուսումնասիրությունների վրա¹: Առանց այս ամենը նշել է, գտել է նա, «մեծ մտածողի մասին մեր ունեցած պատկերացումը կլինի որոշ չափով սահմանափակ, հաճախ նաև ոչ ճիշտ»²:

Ելնելով իր իսկ առաջադրած պահանջներից, Հ. Բարթիկյանն իրեն բնորոշ մանրակրկիտությամբ քննության առարկա է դարձրել Անանիա Շիրակացուն վերագրվող երկու երկերի՝ «Յաղագս ամպոց և նշանաց» օղերնութաբանական բովանդակությամբ աշխատության ու «Ժամանակագրության» հեղինակային պատկանելության հարցերը: Ընդ որում, դրանցից առաջինին նա անդրադարձել է երկու, իսկ երկրորդին՝ մեկ հոդվածով:

«Յաղագս ամպոց և նշանաց»

Այս երկին Հ. Բարթիկյանը նախ անդրադարձել է «Արատոս Սոլացու «Διοσημεια» կամ «Προγινωστιχα» աշխատության հին հայերեն թարգմանությունը» խորագրով հոդվածով³: Հոդվածի խորագիրն իսկ ընթերցողին հուշում է, որ նա սերտ կապեր է տեսել Արատոս Սոլացու այդ աշխատության, նրա հին հայերեն թարգմանության ու «Յաղագս ամպոց և նշանաց»-ի միջև:

Հ. Բարթիկյանը նախ ներկայացրել է Մակեդոնիայի արքունական բանաստեղծ Արատոս Սոլացու (Ք. ա. 315-

¹ Տե՛ս Բարթիկյան 1967, 57:

² Տե՛ս Բարթիկյան 1967, 57:

³ Տե՛ս Բարթիկյան 1964, 331-363:

240/239) կյանքն ու գրական գործունեությունը, նրան բնութագրելով իբրև ավեքսանդրյան պոեզիայի և մշակույթի ամենափայլուն ներկայացուցիչներից մեկի⁴: Նշելով, որ Արատոսի բազմաթիվ գործերից մեզ է հասել նրա լոկ «Ֆենոմեա» չափածո երկը, Հ. Բարթիկյանը գտել է, որ այն իրականում նշանավոր աստղաբաշխ Եվդոքսոս Կնիդացու (Ք. ա. 408-356) մեզ չհասած օդերևութաբանական արձակ երկն է, որն Արատոսը վեր է ածել չափածո պոեմի⁵: Ապա Հ. Բարթիկյանը նկատել է, որ նրա երկրորդ մասը, ուր մանրամասնորեն խոսվում է եղանակը կանխագուշակող նշանների մասին, վերնագրված է «Դիոսեմեա» կամ «Պրոգնոստիկա»: Դրանից հետո նա մեթոդապես ճիշտ վարվելով նաև անդրադարձել է «Յաղագս ամպոց և նշանաց»-ի հեղինակային պատկանելության շուրջ հայագիտության մեջ տեղ գտած կարծիքներին: Ապա անցել է այդ երկի չափածո բնագրի ու դրա հին հայերեն արձակ թարգմանության համեմատությանը՝ կատարելով համապատասխան եզրահանգումներ:

«Յաղագս ամպոց և նշանաց»-ի մասին Հ. Բարթիկյանի շարադրանքը համառոտ այսպիսին է: Պարզվում է, որ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է Ղուկաս գրչի ձեռքով ընդօրինակված 971 թ. մի ձեռագիր⁶: Դրանում զետեղված է սկզբից թերատ մի երկ, որը գտնվում է Անանիա Շիրակացուն պատկանող բնագրերի շարքում և անմիջապես կից է նրա ճառերին: Այս բնագիրը հայտնաբերել և առաջինը հրատարակել է Գ. Տեր-Մկրտչյանը⁷: Նա XV դ.

⁴ Տե՛ս Բարթիկյան 1964, 113-117:

⁵ Տե՛ս Բարթիկյան 1964, 332:

⁶ Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 2679:

⁷ Տե՛ս Տեր-Մկրտչյան 1896, 100-104:

թվագրվող մի ձեռագրում հայտնաբերելով այդ նույն բնագրի «Յաղագս ամպոց և նշանաց» վերնագրված համառոտագրությունը, նույն կերպ է խորագրել իր հրատարակած բնագիրը:

Ըստ Հ. Բարթիկյանի, ելնելով այդ երկի ու Անանիա Շիրակացու «Տիեզերագիտության» մի քանի հատվածների նույնականությունից, նա ոչ միայն չի բացառել, այլև հավանական է համարել այդ բնագիրը մեծ բնագետի գրչի արգասիք լինելը: Ընդ որում, նա իր ենթադրությունը փորձել է հաստատել այդ երկի բովանդակության մանրակրկիտ ուսումնասիրությամբ: Գ. Տեր-Մկրտչյանը մասնավորապես նկատել է, որ դրանում «Շատ տեղ նայն իմաստները, գրեթե միևնույն բառերով, կրկնուում են այս գրուածքի և Շիրակունու ծանօթ երկասիրութեանց մէջ»⁸, գլխավորապես նկատի ունենալով Անանիա Շիրակացու «Յաղագս երկնի» աշխատությունը: Դրա հետ մեկտեղ, նկատել է Հ. Բարթիկյանը, ելնելով այդ բնագրում օգտագործված հունարեն բառերից և դիտողություններից որոշների, ինչպիսին է, օրինակ, կոզինների մասին տեսությունը, Գ. Տեր-Մկրտչյանը հակված է եղել այն մտքին, որ «Յաղագս ամպոց և նշանաց»-ը ոչ թե բնագիր է, այլ՝ թարգմանական գործ⁹:

Հ. Թորոսյանն իր հերթին Գ. Տեր-Մկրտչյանից անմիջապես հետո անդրադառնալով այդ երկի հեղինակային պատկանելությանը, գտել է, որ «Յաղագս ամպոց և նշանաց»-ն «ուրիշ բան չէ, բայց եթե հաւաքում մի այլևայլ օղային եր-

⁸ Տեր-Մկրտչյան 1896, 97:

⁹ Տե՛ս Տեր-Մկրտչյան 1896, 99:

նութից կամ գուշակութեանց, թարգմանեալ յայլնայլ գրոց»¹⁰:
Հ. Բարթիկյանը դա համարել է «անհիմն ու սխալ ենթադրություն»¹¹:

«Յաղագս ամպոց և նշանաց»-ի բնագրի երկրորդ հրատարակիչն Ա. Աբրահամյանն է: Այդ երկի քննությունը նրան հիմք է տվել ենթադրելու, որ «Գալուստ Տեր-Մկրտչյանի հրատարակած տեքստը Շիրակացու տոմարի մի հատվածն է հանդիսացել»¹²: Հ. Բարթիկյանը նկատել է, որ Ա. Աբրահամյանն այդ երկը բնագիր, թե թարգմանական գործ հանդիսանալուն չի անդրադարձել և մատնանշել այդ հրատարակության որոշ անճշտություններ¹³:

Հ. Բարթիկյանը չի անտեսել նաև խնդրո առարկա երկի ռուսերեն թարգմանությամբ հրատարակությունը¹⁴: Նա նշել է, որ թարգմանիչներն այն թարգմանչական գործ լինելու հավանականության մասին Գ. Տեր-Մկրտչյանի վերոբերյալ կարծիքին անդրադառնալով միաժամանակ մատնացույց են արել, որ այն շատ մոտ է Անանիա Շիրակացու «Տիեզերագիտության» օդերևութաբանական համապատասխան բաժնին, որը նմանօրինակ մոտեցում ունի օդերևութաբանական երևույթների նկատմամբ և անգամ կան տառացի համընկնող տեղեր: Այս ամենից թարգմանիչները եզրակացրել են, որ եթե նույնիսկ «Յաղագս ամպոց և նշանաց»-ը թարգմանական գործ է, ուշագրավ է որպես Անանիա Շիրակացու «Տիեզերա-

¹⁰ Թորոսյան 1896, 220:

¹¹ Բարթիկյան 1971, 139:

¹² Աբրահամյան 1944, 138:

¹³ Տե՛ս Բարթիկյան 1964, 336-337:

¹⁴ Տե՛ս Ширакаци 1962, 108-117:

գիտության» աղբյուրներից մեկը¹⁵:

Համապատասխան քննությունը Հ. Բարթիկյանին թույլ է տվել պարզելու, որ Արատոս Սոլացու «Դիոսեմեա» պոեմը հայերեն թարգմանվել է վաղ միջնադարում՝ ոչ ուշ քան VII դարը, և որ Գ. Տեր-Մկրտչյանի 1896 թ. «Արարատ» հանդեսում Անանիա Շիրակացու անունով հրատարակած «Յադագս ամպոց և նշանաց» տեքստը ոչ այլ ինչ է, եթե ոչ «Դիոսեմեա»-յի արձակ թարգմանությունը: Նա միաժամանակ կարծել է, որ Գ. Տեր-Մկրտչյանը միանգամայն իրավացի է եղել, երբ հայկական տեքստի հանգամանալի քննությամբ եզրահանգել է, որ նշված տեքստը հայ հեղինակի ոչ թե բնագիր, այլ թարգմանական գործ է, հնարավոր է՝ Անանիա Շիրակացու կողմից կատարված¹⁶:

Հոդվածի երկրորդ՝ վերջին մասում, ինչպես վերը նշվեց, Հ. Բարթիկյանը զուգահեռաբար բերել է Արատոս Սոլացու աշխատության հունարեն չափածո բնագիրը և նրա հին հայերեն արձակ թարգմանությունը: Դրանց համեմատությունից նա եզրակացրել է, որ հին հայերեն թարգմանությունը «Դիոսեմեա»-յի 51-261 տողերի ոչ ուշ քան VII դ. կատարված թարգմանությունն է: Նա նաև նկատել է, որ «Յադագս ամպոց և նշանաց»-ի տողերից 26-ն ու վերջին կես էջ ընդմիջարկությունն Արատոս Սոլացու չափածո երկում չկան: Ելնելով այդ իրողությունից և Արատոս Սոլացու սկզբնաղբյուրն աստղաբաշխ Եվդոքսոս Կնիդացու վերոհիշյալ մեզ չհասած աշխատությունը հանդիսանալուց, Հ. Բարթիկյանը շատ զգուշորեն առաջ է քաշել «Յադագս ամպոց և

¹⁵ Տե՛ս Ширакци 1962, 337:

¹⁶ Տե՛ս Բարթիկյան 1964, 362:

նշանաց»-ն անմիջականորեն Եվդոքոս Կնիդացու երկից թարգմանված լինելու վարկածը, հարցի լուծումը թողնելով արատոսագետներին¹⁷:

Բացի այդ, Հ. Բարթիկյանը «Դիոսեմեա»-յի բնագրի շնորհիվ բացահայտել է «Յաղագս ամպոց և նշանաց»-ում տեղ գտած մի շարք բառերի (աղաղանչ, աստղակտուց, Կոփիւք, պատիշովն, տըղկունք) մութ իմաստը իմաստը¹⁸:

Տարիներ անց, Հ. Բարթիկյանի հոդվածի հետ կապված «Յաղագս ամպոց և նշանաց» երկն արժանացավ հմուտ հայագետ-բանասեր Գ. Աբգարյանի ուշադրությանը¹⁹: Նրա կարծիքով այն Արատոս Սոլացու երկի թարգմանությունը չէ և որ Հ. Բարթիկյանի բերած գուգահեռ տեքստերը, ոչ թե ցույց են տալիս «Յաղագս նշանաց»-ի ու Արատոս Սոլացու երկի նույնությունը, այլ «իրականում բացահայտում են նրանց տարբերությունները»²⁰: Գ. Աբգարյանը նաև պնդել է, որ Հ. Բարթիկյանի կողմից «ոչ մի բանասիրական փաստարկ չի բերված հոգուտ այդ բանաստեղծության (Արատոս Սոլացու չափածո երկի – Ա. Շ.) և «Յաղագս ամպոց և նշանաց»-ի նույնության: Ընթերցողը չգիտե, թե ինչ հիմունքներով է «Յաղագս նշանաց»-ը համարվել Արատոս Սոլացու թարգմանությունը»²¹: Հ. Բարթիկյանի տեսակետը համարելով ամենամեծ թյուրիմացություն՝ Գ. Աբգարյանը գտել է, որ դրա հիմքում հավանաբար ընկած է «Գ. Զարբհանալյանի մի թռուցիկ դիտողությունը, որի համաձայն Անանիա Շիրակացու աշխատություննե-

¹⁷ Տե՛ս Բարթիկյան 1964, 359:

¹⁸ Տե՛ս Բարթիկյան 1964, 360-361:

¹⁹ Տե՛ս Աբգարյան 1971, 77-94:

²⁰ Աբգարյան 1971, 84:

²¹ Աբգարյան 1971, 21:

րում հանդիպում է Արատոսի «Յաղագս միաւորութեան գնդին» երկից քաղված «աստեղաբաշխական բանք»²²: Նա նաև նկատել է, որ «Հ. Բարթիկյանը ծանոթ չլինելով Հ. Թորոսյանի աշխատությանը, որի մեջ արդեն ցույց է տրված, որ «Յաղագս նշանացը» կազմված է Բարսեղ Կեսարացու հայերեն թարգմանությունից (V դար) հետո՝ սույն երկը վերագրել է այդ թարգմանությունից շուրջ 800 տարի առաջ ապրած Արատոս Սուլացուն»²³: Այնուհետև ելնելով Բարսեղ Կեսարացու «Վեցօրեա ճառերի» ու «Յաղագս ամպոց և նշանաց»-ի ընդհանուր հատվածներից, նա գտել է, որ վերջին երկի հեղինակն օգտվել է Բարսեղ Կեսարացու երկի հայերեն մի թարգմանությունից, որը ոչ մի կապ չունի Արատոս Սուլացու չափածո գործի հետ²⁴:

Գ. Աբգարյանը նաև զգալի տարբերություններ է տեսել վերջինիս ու «Յաղագս ամպոց և նշանաց»-ի միջև, պնդելով, որ դրանք Հ. Բարթիկյանը չի նկատել: Արդյունքում նա Արատոս Սուլացու «Դիոսեմիա»-ն անգամ «Յաղագս ամպոց և նշանաց»-ի աղբյուրների շարքում չի դասել, գտնելով, որ այդ երկու աշխատությունների միջև ընդհանրությունների հետքն անգամ չկա: Պատճառն այն է, որ ըստ նրա վերջինս ոչ թե հունարեն մի ամբողջական աղբյուրի թարգմանություն է, այլ՝ արդեն պատրաստի հայերեն զանազան թարգմանություններից, այդ թվում «Գիրք վաստակոց»-ից քաղված նյութերի հավաքածու²⁵: Զարգացնելով իր տեսակետը, Գ. Աբգարյանը գտել է, որ «Յաղագս ամպոց և նշանաց»-ի «առաջին ու հիմ-

²² Աբգարյան 1971, 77:

²³ Աբգարյան 1971, 77:

²⁴ Տե՛ս Աբգարյան 1971, 79:

²⁵ Տե՛ս Աբգարյան 1971, 89:

նական մասի» հիմքում ամենայն հավանականությամբ ընկած է Եվդոքսոս Կնիդացու երկից մի հատված, որը VII դ. թարգմանել է Անանիա Շիրակացին²⁶: Իբրև իր այդ կարծիքի հիմնավորում նա գրել է, որ «ավելի հին ժամանակներում (V-VI դդ.) մենք չենք գտնում Շիրակացուց առավել հարմար մի գիտնական, որը հունարենից թարգմանած լիներ Եվդոքսոս Կնիդացու (կամ մեկ ուրիշի) օդերևութաբանական ձեռնարկը»²⁷:

Գ. Աբգարյանն անդրադառնալով «Յաղագս ամպոց և նշանաց»-ի վերջին կես էջ ընդմիջարկությանը՝ կարծիք է հայտնել, որ այն «հավանաբար կազմվել է Անանիա Շիրակացուց հետո»²⁸: Բացի այդ, ըստ նրա Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող թիվ 1973 ձեռագրի հետ 971 թ. ընդօրինակված թիվ 2679 ձեռագրի համեմատությունից պարզվում է, որ Անանիա Շիրակացու թարգմանությունն ամբողջությամբ մեզ չի հասել²⁹:

Ամփոփելով իր դիտարկումները, որոնց մի մասին չանդրադարձանք, Գ. Աբգարյանը պնդել է, որ «Յաղագս ամպոց և նշանաց»-ն անձանոթ հեղինակի կազմած ժողովածու է, որը սխալմամբ է վերագրվել Անանիա Շիրակացուն: Ըստ նրա՝ դրանում օգտագործված են զանազան հեղինակների գործեր: Դրանցից գլխավորը Եվդոքսոս Կնիդացուն պատկանող մի օդերևութաբանական աշխատություն է, որը կապ չունի Արատոս Մոլացու հետ: Ըստ Գ. Աբգարյանի, Եվդոքսոսի այդ երկը VII դ. հայերեն է թարգմանել Անանիա Շիրակա-

²⁶ Տե՛ս Աբգարյան 1971, 89:

²⁷ Աբգարյան 1971, 89:

²⁸ Աբգարյան 1971, 90:

²⁹ Տե՛ս Աբգարյան 1971, 89:

ցին³⁰:

Ինչպես և պետք էր սպասել, Հ. Բարթիկյանը հակադարձեց Գ. Աբգարյանին, բայց ոչ թե նրա նման տարիներ անց, այլ՝ նույն տարում և նույն հանդեսում³¹: Ընթերցողին բանավեճի բուն նյութին ծանոթացնելուց հետո նա հենց սկզբից հայտնելով, որ փաստերը Գ. Աբգարյանի տեսակետները չեն հաստատում՝ անցել է դրանց հերքմանը:

Գ. Զարբհանալանյանի թողուցիկ դիտողությունն իրեն թյուրիմացության մեջ գցած չլինելն ու Հ. Թորոսյանի աշխատությանը քաջածանոթ լինելը հիմնավորելուց հետո Հ. Բարթիկյանը նկատել է, որ ինքը «Յաղագս ամպոց և նշանաց»-ի հունարեն բնագիրն է վերագրել Արատոս Սոլացուն և ոչ թե նրա՝ մեկ հազարամյակ անց կատարված հայերեն թարգմանությունը³²: Դառնալով Արատոս Սոլացու բանաստեղծության ու «Յաղագս ամպոց և նշանաց»-ի միջև Գ. Աբգարյանի նկատած տարբերություններին նա ցույց է տվել, որ դրանք Արատոսի գործի գերմաներեն թարգմանությունը նրա կողմից հայերեն չափածո թարգմանելու ընթացքում կատարած «բազմաթիվ պլաստիկ վիրահատությունների» արդյունք են³³:

Ինչ վերաբերում է «Գիրք վաստակոց»-ը, բայց ոչ երբեք Արատոս Սոլացու բանաստեղծությունը «Յաղագս ամպոց և նշանաց»-ի սկզբնաղբյուրներից մեկը հանդիսանալու մասին Գ. Աբգարյանի կարծիքին, ապա Հ. Բարթիկյանը հիմնավորապես ցուցել է, որ այն X դ. տարբեր հեղինակներից, այդ թվում և Արատոս Սոլացուց կատարված բանաբաղություն է, ինչը

³⁰ Տե՛ս Աբգարյան 1971, 89:

³¹ Տե՛ս Բարթիկյան 1971, 134-150:

³² Տե՛ս Բարթիկյան 1971, 139:

³³ Տե՛ս Բարթիկյան 1971, 140-141:

բարեխղճորեն արձանագրել է նրա կազմողը³⁴։ Դրանից ելնելով նա հիմնագուրկ է համարել Գ. Աբգարյանի պնդումն առ այն, որ Արատոսի բանաստեղծության մեջ «չկա անգամ հետքն այն ընդհանրությունների, որոնք գտնում ենք «Գիրք վաստակոցում» և այլ նմանօրինակ աղբյուրներում»³⁵։

Հ. Բարթիկյանն այնուհետև անհիմն է համարել իրականում Գ. Տեր-Մկրտչյանի հետևությամբ Գ. Աբգարյանի կողմից «Յադագս ամպոց և նշանաց»-ի թարգմանությունն Անանիա Շիրակացուն վերագրելը, պնդելով, որ եթե նրանցից առաջինն իր ենթադրությունը հաստատելու համար ինչ-որ հիմքեր է փնտրել, ապա երկրորդը բավարարվել է V-VII դարերում դրա համար Անանիա Շիրակացուց առավել հարմար գիտնական գտնված չլինելու պատճառաբանությամբ³⁶։ Իր միտքը շարունակելով՝ Հ. Բարթիկյանը գրել է. «Ստացվում է, որ որևէ երկի թարգմանիչը որոշելու գործում կարևորը այդ երկի համար «առավել հարմար» թագմանիչ փնտրել, գտնելն է, և ոչ թե այդ երկի բազմակողմանի ուսումնասիրությունը։ Մի կողմ թողած առաջ քաշված «փաստարկի» ոչ լուրջ լինելը, ժամանակը չէ՞, արդյոք, որ վերջապես ձերբագատվենք ողջ հայ միջնադարի ճշգրիտ գիտությունների մասին խոսելիս սոսկ Անանիա Շիրակացու անունը հոլովելուց»³⁷։ Հ. Բարթիկյանի այս հարցադրման հետ դժվար է չհամաձայնվել։

Սպասելի էր, որ Գ. Աբգարյանը, իր իսկ սկսած բանավեճը կշարունակեր, սակայն նա այդպես չվարվեց։ Պատճառը, թերևս պետք է փնտրել նրա կողմից Հ. Բարթիկյանի բե-

³⁴ Տե՛ս Բարթիկյան 1971, 141-142։

³⁵ Բարթիկյան 1971, 88։

³⁶ Տե՛ս Բարթիկյան 1971, 144։

³⁷ Բարթիկյան 1971, 144։

րած հակափաստարկներն ընդունվելու մեջ:

Ժամանակագրություն

Անանիա Շիրակացուն վերագրված մյուս աշխատությունը, որին անդրադարձել է Հ. Բարթիկյանը, ինչպես վերը նշվեց, «Ժամանակագրությունն» է: Այն «Յաղագս ամպոց և նշանաց»-ի նման մեզ է հասել Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 2769 ձեռագրում: Այն հրատարակել են Բ. Սարգիսյանը և Ա. Աբրահամյանը³⁸:

«Ժամանակագրության» հեղինակային պատկանելության ճշտմանը նվիրված հոդվածի³⁹ հենց սկզբում Հ. Բարթիկյանը նկատել է, որ «Յաղագս ամպոց և նշանաց» երկի իսկական հեղինակին հայտնաբերելուց հետո Անանիա Շիրակացու գրական ժառանգության ճշտորոշման ուղղությամբ աշխատանքը շարունակելով կանգ է առել նրան վերագրված «Ժամանակագրության» վրա⁴⁰:

Շարունակելով նա նշել է, որ գրեթե անտեսելով անցյալում այդ երկի ուսումնասիրությամբ զբաղված գիտնականների ձեռքբերումները, այժմ աներկբա «Ժամանակագրություն»-ն ամբողջությամբ վերագրվում է Անանիա Շիրակացուն: Արդյունքում ստեղծվել է այն տպավորությունը, որ դրանով, իբր, հայկական միջնադարի խոշորագույն նվաճողներից մեկը մի աստիճանով բարձրացվում է⁴¹:

Հ. Բարթիկյանն այնուհետև անդրադարձել է «Ժամանակագրության» քննությամբ զբաղված նախորդ հետազո-

³⁸ Տե՛ս Սարգիսյան 1904: Աբրահամյան 1944, 357-400:

³⁹ Տե՛ս Բարթիկյան 1967, 57-77:

⁴⁰ Տե՛ս Բարթիկյան 1967, 57:

⁴¹ Տե՛ս Բարթիկյան 1967, 57:

տողների՝ Գ. Խալաթյանցի, Ֆ. Ֆինկի, Բ. Սարգիսյանի, Ա. Աբրահամյանի ու Հ. Անասյանի պրպտումներին և գտել, որ նրանք բոլորն ունեն «Ժամանակագրությունը» կամ Անանիա Շիրակացու գրչին պատկանելու, կամ էլ ծայրահեղ դեպքում նրա կողմից խմբագրվելու համոզմունքը⁴²:

Ի տարբերություն նրանց՝ Հ. Բարթիկյանը «Ժամանակագրության» աղբյուրագիտական հիմնավոր քննությամբ եզրահանգել է, որ այն մի երկ է, ուր իրար են կցված տարբեր աղբյուրներ ու հեղինակների գործեր, առանց նկատվելու, որ այդ տվյալները հաճախ իրարամերժ են: Իբրև իր եզրակացության հաստատում՝ նա բերել է «Ժամանակագրությունում» երիցս հիշատակվող Ալեքսանդր Մամյա կայսեր օրինակը: Ցույց տալով, որ առաջին անգամ նրա գահակալության տարիների թիվը 12 է նշված, երկրորդ անգամ՝ 3, իսկ երրորդ անգամ՝ 14, Հ. Բարթիկյանն իրավացիորեն նկատել է, որ «Անանիա Շիրակացու նման մի գիտնական նման բան գրել կամ խմբագրել չէր կարող»⁴³:

Դրանով չբավարարվելով՝ նա վկայակոչել է «Ժամանակագրություն»-ում հանդիպող ժամանակագրական կարգի այլ աղադակող հակասություններ ևս, հավելելով, որ դրանում հռոմեական-բյուզանդական կայսրերի երկու տարբեր ցուցակներն իրենց տվյալներով հաճախ իրար հակասում են: Իրոք, դրանում դժվար չէ համոզվել, եթե աչք ածենք այդ ցուցակներում կայսրերի գահակալման տարիների կամ էլ նրանց թվի վրա: Վերոգրյալի հիմամբ Հ. Բարթիկյանն իրավացիորեն պնդել է, որ ի դեմս «Ժամանակագրության» հեղի-

⁴² Տե՛ս Բարթիկյան 1967, 69:

⁴³ Բարթիկյան 1967, 69:

նակի գործ ունենք մի ապաշնորհ բանաքաղի հետ, որը ոչ միայն չի նկատել իր երկում առկա ճշացող հակասությունները, այլև կատարել է Անանիա Շիրակացու նման հունագետին անհարիր թարգմանական սխալներ⁴⁴։ Բացի այդ, նա նկատել է, որ եթե Անանիա Շիրակացին, լինելով իր ժամանակի ամենաառաջադեմ գիտնականներից մեկը, բնության երևույթները մեկնաբանում էր գիտական տեսանկյունից և սուր քննադատում տարբեր հեղինակների աստղաբաշխական հակադիտական ու սնոտիապաշտական հայացքները և նրանց ծաղրում, ապա «Ժամանակագրության» սնոտիապաշտ բանաքաղը գիտությունից իսպառ հեռու է⁴⁵։

Հ. Բարթիկյանն այնուհետև քննության է ենթարկել այն հարցերը, թե ո՞վ է «Ժամանակագրության» բանաքաղը և թե ո՞ւմ գրչին են պատկանում այդ երկի վերջին բաժնի ինքնուրույն էջերը։ Այդ հարցերին պատասխանելու համար նա դիմել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող թիվ 5254 ձեռագրի օգնությամբ։ Այն 1280 թ. ընդօրինակել է Գևորգ գրիչը։ Հ. Բարթիկյանը հիմնավոր մերժել է այդ բնագիրը Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 2679 ձեռագրից արտագրված լինելու մասին Ա. Աբրահամյանի տեսակետը, փաստարկված պնդելով, որ թիվ 5254 ձեռագրի բնագիրը «շատ ավելի ընտիր է ու սկզբնական»⁴⁶ և որ այդ ձեռագիրը «միանգամայն անկախ է No 2679 ձեռագրից»⁴⁷։

Թիվ 5425 ձեռագրում ընդօրինակված «Ժամանակագրության» սկզբում նշված է՝ «Խոսք Փիլոնի»։ Հ. Բարթիկյանը

⁴⁴ Տե՛ս Բարթիկյան 1967, 69։

⁴⁵ Տե՛ս Բարթիկյան 1967, 69։

⁴⁶ Բարթիկյան 1967, 69։

⁴⁷ Բարթիկյան 1967, 71։

կարծիք է հայտնել, որ այս Փիլոնը Ստեփանոս Տարոնացի Աստղիկի հիշատակած Փիլոն Տիրակացին է՝ Անանիա Շիրակացու կրտսեր ժամանակակիցը: Նաև գտել է, որ նա Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմություն»-ը հունարենից հայերեն թարգմանելուց հետո կազմել է նաև «Ժամանակագրություն»-ը՝ օգտագործելով նաև Սոկրատի այդ աշխատությունը⁴⁸: Սակայն անվերապահորեն պնդելով, որ «Ժամանակագրություն»-ը VII դ. բնագիր է և Անանիա Շիրակացու հետ որևէ աղերս չունի՝ Հ. Բարթիկյանը գտել է, որ «այդ ամբողջ աշխատության ամենահավանական բանաքաղթարգմանիչն ու ինքնուրույն էջերի հեղինակը՝ Անանիա Շիրակացու կրտսեր ժամանակակից Փիլոն Տիրակացին է»⁴⁹: Ընդ որում, նախքան այդ, նա նկատել է, որ Փիլոն Տիրակացին գիտելիքներով չէր փայլում:

Եզրակացություններ

Վերոգրյալից հետևում է, որ անվանի հայագետ-բյուզանդագետ Հ. Բարթիկյանը մեծ ավանդ է ներդրել նաև Անանիա Շիրակացու գիտական ժառանգության ճշտորոշման գործում: Դա վերաբերում է միջնադարի ականավոր բնագետին վերագրված երկու երկերին՝ «Յաղագս ամպոց և նշանաց»-ին և «Ժամանակագրությանը»: Այդ երկերի համադիր քննությամբ նրան հաջողվել է համոզիչ ապացուցել, որ դրանցից առաջինն իրականում Արատոս Սոլացու «Διοσημειολικαὺ Προγινωστικα» չափածո երկի հայերեն արձակ թարգմանությունն է, իսկ երկրորդը՝ VII դ. բնագիր է, որի ամենահա-

⁴⁸ Տե՛ս Բարթիկյան 1967, 72:

⁴⁹ Բարթիկյան 1967, 76:

վանական բանաքաղ-թարգմանիչն Անանիա Շիրակացու կրտսեր ժամանակակից Փիլոն Տիրակացին է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբգարյան Գ. Վ. 1971, Շիրակացուն վերագրված «Յաղագս ամպոց և նշանաց» աշխատության մասին.-«Պատմա-բանասիրական հանդես», No 1, էջ 77-94:

Աբրահամյան Ա. Գ. 1944, Անանիա Շիրակացու Մատենագրությունը, Երևան, ՀՍՍՀ Մատենադարանի հրատարակչություն, 419 էջ:

Բարթիկյան Հ., 1964, Արատոս Սոլացու «Διοσημει» կամ «Προγινωστικα» աշխատության հին հայերեն թարգմանությունը.- «Բանբեր

Մատենադարանի», No 7, էջ 331-363:

Բարթիկյան Հ. 1967, Անանիա Շիրակացուն վերագրվող «Ժամանակագրության» և նրա բանաքաղի հարցի շուրջը, «Բանբեր Մատենադարանի».- No 16, էջ 57-77:

Բարթիկյան Հ. Մ. 1971, Դարձյալ Անանիա Շիրակացուն վերագրված «Յաղագս ամպոց և նշանաց» աշխատության մասին.- «Պատմա-բանասիրական հանդես», No 4, էջ 139-50:

Թորոսյան Հ., 1896, Անանիա Շիրակացին և «Արարատ» թերթին մեկ հավելվածը.- «Բազմավեպ», էջ 214-221:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 2679:

Մարգիսյան Բ. 1904, Անանուն ժամանակագրություն, խմբագիր յորինեալ յԷ դարու ի հնագոյն ժամանակագրաց, Վենետիկ, 106 էջ:

Տեր-Սկրտչյան Գ. 1896, Անանիա Շիրակացի, Ա.- «Արարատ», 1896, Բ էջ 96-104:

Анания Ширакаци 1962, Космография, перевод с древнеармянского, предисловие и комментарии К. С. Тер-Давтян и С. С. Аревшатян, Ереван, Издательство АН Армянской ССР, 128 с.

Арташес И. Шахназарян, *Институт истории НАН РА, к.и.н., Исследования академика Грача Бартикяна по ширакациведению (к 95-летию со дня рождения).*

Резюме

Библиографическое наследие крупнейшего представителя армянской средневековой естественнонаучной мысли Анания Ширакаци привлекло также внимание известного арменоведа-византолога Грача Бартикяна.

Предметом его скрупулезного анализа стал вопрос авторства двух приписываемых А. Ширакаци работ – сочинения метеорологического содержания «Об облаках и знамениях» и «Хронологии». Причем к первой из них Г. Бартикян обращался дважды – в связи с развернутой вокруг нее дискуссией опытным арменоведом, филологом Г. Абгаряном, а ко второй – лишь однажды.

В итоге Г. Бартикян убедительным образом показал, что обе эти работы не принадлежат перу Ширакаци. Он высказал обоснованное мнение, что первая из них является не стихотворным армянским переводом поэмы «Диосемиа» древнегреческого поэта Аратоса из Сол. Что же касается второй, то Г. Бартикян сделал заключение, что она в основном являет собой материал, взятый из произведений древнегреческих авторов. Наиболее вероятным фольклористом-переводчиком этого труда и собственно автором определенных страниц является младший современник А. Ширакаци – Пилон Тиракаци.

Г. Бартикян справедливо отмечал, что настало время перестать приписывать А. Ширакаци работы по точным наукам армянского средневековья.

Ключевые слова: Анания Ширакаци, Г. Бартикян, Аратос из Сол, Евдокс Книдаци, Месроп Маштоц, Матенадаран, Пилон Тиракаци, Сократ, Г. Абгарян.

Artashes I. Shahnazaryan, *Institute of History of the NAS RA, Cd. of Sci. in History, Academician Hrach Bartikyan's searchings on Shirakatsi studies (on the occasion of his 96th birth anniversary).*

Summary

The bibliographic heritage of Anania Shirakatsi – the greatest representative of the Armenian medieval naturalistic thought, was given to the attention of famous Armenologist-Byzantinist H. Bartikyan.

The subject of his scrupulous analysis was the issue of the authorship of two works attributed to A. Shirakatsi – meteorological works “On the Clouds and Signs” and the “Chronology”. At that, H. Bartikyan addressed the first of them twice – in connection with the discussion unfolded around it by an experienced Armenologist, philologist G. Abgaryan, and the second – only once.

As a result, H. Bartikyan has convincingly proved that those works do not belong to the pen of Anania Shirakatsi. He put forward the grounded opinion that the first of them is the prose translation of the poem “Diosemia” by famous Greek poet Aratus of Soli. As for the second work, H. Bartikyan showed that it is mainly a compilation from the works of ancient Greek authors. Its most probable compiler-translator and author of individual pages is Pylon Tirakatsi – the junior contemporary of Anania Shirakatsi.

H. Bartikyan rightly noted that it was time to stop attributing to A. Shirakatsi the works on the exact sciences of the Armenian Middle Ages.

Key words: Anania Shirakatsi, H. Bartikyan, Aratus of Soli, Eudoxus of Cnidus, Mesrop Mashtots, Matenadaran, Pylon Tirakatsi, Socrates, G. Abgaryan.